ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ **ՀԱՄԱՅՆՔ**ԱՊԵՏԱՐԱՆ

գ. Շիրակամուտ

N- Ե -03/82
«05» 04. 2018թ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Ձեզ ենք ներկայացնում Շիրակամուտ համայնքի ղեկավարի թիվ 21-Ա ,22-Ա և թիվ 23-Ա որոշումները :

Առդիր 3էջ:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, հասցե Հայկական փողոց,թիվ 2

Հեռախոս՝ 0255-6-15-01
Էլ.Փոստ՝shirakamut.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 29» մարտի 2018 թվականի N21-Ա

ԱԼՍԻՐ ԵՐԱՆՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ և ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ և 38-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29.12.2005թ-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով,հաշվի առնելով Ալսիր Երանոսյանի դիմումը՝ իրեն պատկանող հողամասը և բնակելի տունը տարանջատելու և որպես 2 առանձին միավորներ ճանաչելու մասին. Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի վարչական տարածքում գտնվող սեփականության իրավունքով Ալսիր Ալբերտի Երանոսյանին պատկանող 06-087-0075-0003 ծածկագրով 0.108 հա բնակավայրերի հողամասը և նրա վրա կառուցված բնակելի տունը համաձայն սույն որոշման հավելված հանդիսացող հատակագծերի տարանջատել առանձին գույքային միավորների:

2. 0.03209 հա հողամասին և նրա վրա կառուցված բնակելի տանը տրամադրել գ.Շիրակամուտ, փողոց 17, տուն 5 փոստային հասցե:

3. 0.07562 հա հողամասին և նրա վրա կառուցված բնակելի տանը տրամադրել գ.Շիրակամուտ, փողոց 17, տուն 5/1 փոստային հասցե:

4. Դիմել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանում, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցում կատարելու և քաղաքացուն սեփականության իրավունքի վկայականներ տրամադրելու համար:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, գ. Շիրակամուտ
հեռ.՝ 025561501

# Ո Ր Ո Շ Ու Մ

«30» մարտի 2018 թվականի N22- Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Շիրակամուտ համայնքի թիվ 8 –րդ փողոցի վրա գտնվող 06-087-0013-0002 կադաստրային ծածկագրով 0,144 հեկտար մակերեսով տնամերձ հողամասին և դրա վա գտնվող բնակելի տանը տալ «գ. Շիրակամուտ, փողոց թիվ 8 , տուն թիվ 42/1 » հասցեն:
2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման

Համայնքի ղեկավար ՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, գ. Շիրակամուտ
հեռ.՝ 025561501

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 04 » ապրիլի 2018 թվականի N23 - Ա

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածով և հիմք ընդունելով Շիրակամուտի համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի 2018թ.մարտի 30-ի թիվ 2 արձանագրությունը, քաղ.՝ Սոնիկ Սմբաթյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Շիրակամուտ համայնքի բյուջեի 4726 հոդվածից Շիրակամուտ համայնքի բնակիչ Սոնիկ Սմբաթյանին՝ հարազատի հուղարկավորության ծախսերը հոգալու նպատակով, հատկացնել դրամական օգնություն 30000/երեսունհազար/ ՀՀ դրամ.
2. Համայնքապետարանի առաջատար մասնագետ-հաշվապահին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

Կ.Տ.